

Ա. Ղարիբյան

ՀԱՅ ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒՄ

Նախառևոյուցիոն շրջանում հայ լեզվաբանությանը զբաղվում էին հայերը և օտարները Փարիզում, Բեռլինում, Լայպցիգում, Վիեննայում, Պետերբուրգում, Թիֆլիսում, բայց ո՛չ Նրևանում: Հետազոտությունները շոշափում էին սկզբունքային հարցեր, սակայն հայ լեզվաբանության կոնկրետ խնդիրները մնում էին չլուծված: Նախառևոյուցիոն շրջանում ունեինք այնպիսի խոշոր լեզվաբաններ, ինչպիսին էին Հ. Աճառյանը, Ս. Մալխասյանը, Մ. Աբեղյանը, սակայն նրանց աշխատանքների ծավալման համար չկային պետական ուսումնական, չկար համապատասխան միջավայր:

Սովետական կարգերի հաստատումից հետո՝ Հայաստանում հիմնադրվեց Հայկական պետական համալսարան, որը և դարձավ հայ լեզվաբանության աղբյուրի միջավայրը: Համալսարան հրավիրվեցին աշխատելու Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, հետագայում նաև Գ. Ղափանցյանը: Պետական համալսարանը Սովետական կառավարության կողմից ապահովված էր նյութական հնարավորություններով և հրատարակչական կարողություններով, այդ պատճառով էլ հնարավոր եղավ այնտեղ մշակելու և հրատարակելու հայ լեզվաբանությանը վերաբերող կարևոր գործեր:

Բարձրագույն կադրեր պատրաստելու նպատակով հիմնվեցին մանկավարժական ինստիտուտներ, որոնք ունեցան ասպիրանտուրա, և Համալսարանի հետ միասին պատրաստեցին հայագիտական բարձրորակ նոր կադրեր: Վերջապես ստեղծվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, որի Հասարակական գիտությունների բաժանմունքը դարձավ հայագիտության մեծ կենտրոն: Այս բոլորը նախառևոյուցիոն շրջանից եկած և նոր պատրաստված կադրերին հնարավորություն տվեցին հայագիտության շուրջը հետազոտական աշխատանքներ ծավալելու և լուծելու հայագիտական շատ պրոբլեմներ:

Սովետական շրջանում հայ լեզվաբանության ամենախոշոր նվաճումը, նրա գագաթը պետք է համարել Հ. Աճառյանի «Արմատական բառարանը»: Այդ աշխատությունը, որ բաղկացած է վեց ապակետիպ հատորներից, և մեկ տպագիր լրացուցիչ հատորից, աննախընթաց գործ է ոչ միայն հայ լեզվաբանության պատմության մեջ, այլ լեզվաբանության պատմության մեջ ընդհանրապես: Այդ աշխատության մասին միջազգային լեզվաբանության խոշոր սյուներից մեկը՝ Անտուան Մեյեն ասում է.

«Ո՛չ մի լեզվի համար չկա այսքան ճոխ, այսքան կատարյալ ստուգաբանական բառարան: Հպարտ եմ, որ ունեցել եմ պր. Աճառյանին երկար տարիներ իմ աշակերտների թվում. նա մեկն է նրանցից, որոնք պատիվ են բերել այն դպրոցին, որից անցել են»:

Նրկրորդ խոշոր գործը պետք է համարել ակադեմիկոս Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանը», որն իր մեջ ամփոփում է հայ զրականության մեջ գործածած բոլոր անձնանունները:

Փաստորեն «Անձնանունների բառարանը» հայ կուլտուրայի պատմության լավագույն աղբյուրն է և աղբյուրագիտական ձեռնարկը:

Սովետական հայագիտության խոշոր նվաճումներից մեկը պետք է համարել Ստ. Մալխասյանցի «Հայերենի քաղաքական բառարանը», որն իր մեջ ամփոփում է շուրջ 100 հազար բառ: Բառարանը մեծ դարկ ավեց մեր՝ կենդանի լեզվի բառային կազմի հարստացմանը և երկլեզվյան բառեր կազմելու գործին: Հիշատակելի են Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանը», Վ. Արծրունու «Ռուս-լատիններեն-հայերեն բժշկագիտական տերմինների բառարանը», Լ. Հովհաննիսյանի «Վատին-ռուս հայերեն բժշկական բառարանը», «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը» և այլն:

Հայ բառարանագիտության համար մեծ նշանակություն ունի հրատարակվող Ռուս-հայերեն քառահատոր բառարանը, որ մեր բառարանական կուլտուրայի մեջ մտնում է որպես ֆունդամենտալ գործերից մեկը:

Հայ լեզվաբանությունը սովետական կարգերում ստեղծեց հայոց լեզվի պատմության մի շարք աշխատություններ: Դրանցից հիմնադրային աշխատանքը պետք է համարել Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» երկհատոր աշխատությունը (1-ին հատորը հրատարակվել է 1940 թ., 2-րդ հատորը 1951 թ.): Այդ աշխատությունը, գծելով հայոց լեզվի զարգացման պատմության ընդհանուր պրոսպեկտը, միաժամանակ հանգամանորեն և գիտականորեն շարադրում է հայ պատմական բառագիտությունը: Այդ աշխատության ներշնչմամբ կազմվեց ու հրապարակվեց պրոֆ. Ս. Ղազարյանի «Հայոց լեզվի համառոտ պատմություն» հետաքրքրական աշխատությունը և Վ. Սևակի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» ուսանելի աշխատությունը: Հայոց լեզվի տեսության բնագավառում առաջին աշխատությունը հրապարակեց Մ. Աբեղյանը 1931 թ.: Այդ աշխատությունը հիմնականում ընդգրկում էր հայ բառագիտությունը, թեև աշխատության մեջ շոշափված էին նաև այլ հարցեր: Հետագայում այս հարցերին անդրադարձավ Հայկական ՍՍՌ ԳԱ լեզվաբանության անհամ Գ. Սևակը, որը զբաղեցրեց «Հայոց լեզվի տեսություն» աշխատությունը:

Աշխատությունը առաջ բերեց հետաքրքրություն դեպի հայոց լեզվի տեսական հարցերը, որի հետևանքով գրվեցին մի շարք գործեր երիտասարդ լեզվաբանների կողմից (Ա. Մարգարյան, Ս. Արրահամյան և ուրիշներ): Այս հեղինակները քննության նյութ դարձրին հայերենի քերականության առանձին հարցեր տեսական նոր մակարդակի վրա դնելով դրանք:

Ա. Աբրահամյանը հայերեն գերբայների հարցը խոր և մանրադնին քննության ենթարկեց «Հայերենի գերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (1953) ուսանելի և լուրջ աշխատության մեջ:

Հայոց լեզվի բայական տեսությանն է նվիրված Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսությունը» (1954) լուրջ աշխատությունը:

Ժամանակակից հայերենի բառային կազմի խոր և մանրամասն քննությանը նվիրված է Ա. Մուրվալյանի «Հայոց լեզվի բառային կազմը» (1956) աշխատությունը: Վ. Առաքելյանը հրապարակել է «Ժամանակակից հայերենի

հնչյունաբանությունը» և «Ավ. Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները» հղացումներով լի աշխատությունները:

Եվ վերջապես, Գ. Զահուկյանը 1956 թ. հրապարակեց իր «Քերականական և ուղղագրական աշխատանքները հին և միջնադարյան Հայաստանում» քննական հետազոտությունը:

Քերականական աշխատությունների մեջ ամենամեծ տեղը բռնում է Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» ուսումնասիրությունը: Այս աշխատությունը քերականագիտության և համեմատական քերականության զուգործոց է հայ լեզվաբանական գիտության մեջ: Լույս են տեսել առաջժամ երեք հատորը և «Ներածությունը»: Վերջինս ընդհանուր լեզվաբանությանը նվիրված հարուստ և հետաքրքրական աշխատություն է:

Հրատարակված է Ա. Աբրահամյանի «Գրաբարի քերականություն» բուհական ձեռնարկը:

Լեզվաբանության տեսությանը նվիրված առաիշն լուրջ դործը ակադեմիկոս Գր. Ղափաճյանի «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատությունն է, որ լույս տեսավ 1938 թ.:

Ընդհանուր լեզվաբանության կուրս ստեղծեց հետագայում Ելրոֆ. է. Աղայանը, որի «Լեզվաբանության ներածություն» աշխատությունը իբրև երրորդ հրատարակություն լույս տեսավ 1952 թ.:

Հայ բարբառագիտությունը ևս ընդարձակ ծավալ ստացավ Սովետական Հայաստանում: Սովետական ժամանակաշրջանում հրատարակվեցին Հ. Աճառյանի ութ մենագրությունները նվիրված նոր Նախիջևանի, Մարաղայի, Համշենի, Պոլսի, Վանի, Ագուլիսի, Նոր Զուղայի և Արտիալի բարբառներին: Հրապարակվեց Հ. Մկրտչյանի «Կարնո բարբառը» և Վ. Պետոյանի «Սասունի բարբառը» աշխատությունները: Կրկնակի հրատարակությամբ լույս տեսավ է. Աղայանի «Մեղրու բարբառը» մենագրությունը: Բացի այս հայտնաբերվեցին և նկարագրվեցին շուրջ 22 նոր բարբառներ: Զարգացվեց հայ բարբառների ձևաբանական դասակարգումը, տրվեց նաև հայ բարբառների հնչյունական դասակարգումը: Ծիշտ է, հայագիտության հարցերը լուծվելուց դեռ շատ հեռու են, սակայն այդ ամենը վկայում են, որ սովետական կարգերում հայագիտությունը, հայ լեզվաբանությունը զարգացման նոր թափ ստացավ և ստեղծեց հարուստ գիտական դրականություն: Սակայն մեր նվաճումներից ամենամեծը այն կադրերն են, որ ստեղծված են Սովետական Հայաստանում, կադրեր, որոնց ղեկավարումը հայագիտությունն է, հայ լեզվաբանության մշակումը:

Ձանաղան հողվածներով և առանձին աշխատություններով հանդես են եկել Վ. Գևորգյանը, Բ. Վերդյանը, Վ. Քոսյանը, Հ. Կոստանյանը, Պ. Բեդիրյանը, Ա. Պողոսյանը, Ռ. Բաղրամյանը, Գ. Գասպարյանը, Մ. Ասատրյանը, Ա. Սուքիասյանը և ուրիշ շատ շատերը:

Սովետական հայրենիքը լիակատար կերպով ապահովել է հայ լեզվաբանության զարգացման ջինջ ապագան: